ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ _____/Ս. Ղեղոյան/___ «31» _____օգոստոս_____ 2022 թ.

Կ.Տ.

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

_____Երևանի_____ _____Մալաթիա-Սեբաստիա համայնքի_____

մարզ համայնք

_____հ. 179 հիմնական դպրոցի_____ 8Գ

_____դասարանի_____

ուսումնական հաստատության անվանումը, դասարանը

_____

_____Անահիտ Գուրգենի Հովհաննիսյան_____

դասարանի ղեկավարի անունը, հայրանունը, ազգանունը

«_2022_, _2023_» ուսումնական տարի

# ԿՐԹԱԿԱՆ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ *(դասարանի ընդհանուր բնութագիրը)*

2022-2023 ուստարում 8Գ դասարանում սովորում են 25 աշակերտներ՝ 12 տղա, 13 աղջիկ: Այս ուսումնական տարում ունենք նոր աշակերտներ՝ 2 տղա և 2 աղջիկ: Դասագրքերով ապահովված են բոլորը: Ճիշտ է, դասարանն ունի ընդամենը կես տարվա պատմություն, բայց ձևավորվել է համերաշխ կոլեկտիվ: Աշակերտները կազմակերպված են, ունեն պատասխանատու վերաբերմունք դասի նկատմամբ:

2. ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

2022-2023 ուստարում հիմնական խնդիրը պետք է լինի գիտելիքների որակի բարձրացումը: Պետք է կարողանանք աշակերտներին ուղղորդել ոչ միայն գիտելիքների յուրացմանը, այլև հմտությունների ձեռքբերմանը: Պետք է ամեն ինչ անել աշակերտների կարգապահությունը և լավ վարքը ապահովելու համար՝ համագործակցելով ՄԿԱ և ՈՒԱ գծով փոխտնօրենների հետ:

Պետք է աշակերտների մեջ զարգացնել ընկերասիրություն,, աշխատասիրություն: Ուստարվա ընթացքում պետք է կազմակերպել զրույցներհայրենիքի և հայրենասիրության, ազգասիրության, ընկերասիրության, արվեստի մասին: Կազմակերպել արտադասարանական միջոցառումներ, էքսկուրսիաներ:

Աշակերտները պետք է սովորեն լինել ազնիվ, շիտակ, կարողանան տեսնել ու գնահատել գեղեցիկը:

Հետևել աշակերտների առաջադիմությանը՝ սերտորեն համագործակցելով ծնողների հետ:

Մշտապես անհատական աշխատանք կատարել աշակերտների հետ՝ հաշվի առնելով, որ 8-րդ դասարանցիները անցումային դժվար տարիքում են:

Կարևորել դասավանդող ուսուցիչների հետ համագործակցությունը:

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն

Անհրաժեշտ է աշակերտների մեջ սերմանել հոգևոր արժեքների կարևորությունը, հասկանալ այդ արժեքները գնահատելու կարևորությունը: Զրույցները, բանավեճերը, էքսկուրսիաները պոտք է նպաստեն հասկանալու, թե ինչ է կրոնը, ինչ է աղանդը, որ կարողանան խուսափել աղանդների ազդեցությունից:

### 3.2 Գեղագիտական դաստիարակություն

Աշակերտների մեջ զարգացնել գեղագիտական ճաշակ: Դրան հասնելու համար կազմակերպել զրույցներ, այցելություններ թանգարան, թատրոն, պատկերասրահ:

Զրույցների ժամանակ կարևորել հայկական մշակույթը, ցույց տալ նրա յուրօրինակությունը, որը մեր ժողովրդի յուրահատուկ հոգեկերտվածքի և ինքնօրինակության արտահայտությունն է:

### 3.3 Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն

Զրույցների, բանավեճերի, ֆիլմերի և հաղորդումների դիտման շնորհիվ սերմանել հայրենասիրություն,: Ձևավորել հարգանք և սեր հայրենիքի պատմության նկատմամբ: Անդրադառնալ մեծ հերոսամարտերի պատմությանը, իմանալ հայկական բանակի ձևավորման պատմությունը:

### 3.4 Ֆիզիկական դաստիարակություն

Կազմակերպել քննարկումներ առողջ ապրելակերպի և նրա անհրաժեշտության մասին: Աշակերտները կներկայացնեն անվանի հայ մարզիկների և նրանց հաջողությունների մասին զեկուցումներ: Աշակերտներին սովորեցնել, որ պետք է առաջնորդվել «Առողջ մարմնում՝ առողջ հոգի»
կարգախոսով:

### 3.5 Աշխատանքային դաստիարակություն

Աշակերտների մեջ արթնացնել սեր աշխատանքի նկատմամբ, սովորեցնել, որ որևէ աշխատանքի մեջարդյունքների հասնելու ամենակարևոր պայմանը կարգուկանոնը և պատասխանատվությունն են:

### 3.6 Բնապահպանական դաստիարակություն

Աշակերտները պետք է ճանաչեն հայրենի բնությունը: Պետք է հասկանան բնության դերն ու նշանակությունը, պետք է սովորեն հարգանքով և խնամքով վերաբերվել բնությանը: Ամենափոքր անփությունը կարող է անդառնալի հետևանքների հանգեցնել:

## 4. ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ

Աշակերտների զարգացման համար ամենակարևորը դպրոց-ընտանիք կապն է: Այդ կապն ամրապնդելու համար անցկացնել ծնողական ժողովներ, սերտ համագործակցել ծնողների հետ, որը կնպաստի աշակերտներին ավելի լավ ճանաչելուն և հասկանալուն:

## ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

| Ուսումնական շաբաթներ | Ուսումնադաստիարակչական Աշխատանքների բովանդակությունը | Կատարման ժամկետը | կատարողներ |
|---|---|---|---|
| 01.09.22. | Գիտելիքի օր | 01.09.22. | |
| 1-ին շաբաթ | Կազմակերպական հարցեր. Դասագրքերի բաշխում, ավագի նև ուսխորհրդի անդամների ընտրություն | 05.09.-09.09 | Դասղեկ, աշակերտներ |
| 2-րդ շաբաթ | Զրույց «Ո՞վ եմ ես: ինչպե՞ս մէ ձևավորվում իմ եսը» | 12.09-16.09 | Դասղեկ, աշակերտներ |
| 3-րդ շաբաթ | Հայաստանի անկախության օրը | 19.09.23.09. | Դասղեկ, աշակերտներ |
| 4-րդ շաբաթ | Քառասունչորսօրյա պատերազմը և նրա դասերը | 26.09.-30.09. | Դասղեկ, աշակերտներ |
| 5-րդ շաբաթ | Գեղագիտական դաստիարակություն. Գրքի և արվեստի դերը մարդու կյանքում | 03.10.-07.10. | Դասղեկ, աշակերտներ |
| 6-րդ շաբաթ | Բանավեճ «Ի՞նչ է հանդուրժողականությունը: Անհանդուրժողականության դրսևորումները» | 10.10.-14.10. | Դասղեկ, աշակերտներ |
| 7-րդ շաբաթ | Բանավեճ «Ինչպես ապացուցել քո ճշմարտացիությունը: Ինչպես կազմակերպել առողջ բանավեճ» | 17.10.-21.10. | Դասղեկ, աշակերտներ |
| 8рդ շաբաթ | Զրույց «Իմ վատ սովորությունները»: Առողջ ինքնաքննադատության կարևորությունը: | 31.10-04.11. | Դասղեկ, աշակերտներ |
| 9-րդ շաբաթ | Գեղագիտական ցզարգացում «Տաթևի վանք», «Տաթևի ճոճվող սյան առեղծվածը» (Յութուբյան նյութերի դիտում, 11 և 10 րոպե): | 07.11.-11.11. | Դասղեկ, աշակերտներ |
| 10-րդ շաբաթ | Բանավեճ «Ինչպե՞ս չկորցնել հարազատ մարդկանց վստահությունը»: պետք է վերանայել սեփական արարքները և կոլեկտիվում փոխհարաբերությունները | 14.11.-18.11. | Դասղեկ, աշակերտներ |
| 11-րդ շաբաթ | Զրույց «Հարգանք; Հարգանքը սեփական անձի և դիմացինի նկատմամբ» | 21.11.-25.11. | Դասղեկ, աշակերտներ |

| | | | |
|---|---|---|---|
| 12-րդ շաբաթ | Զրույց-բանավեճ «Ընտանիքի դերը իմ կյանքում»: Հ.Մալոյի «Առանց ընտանիքի» ֆիլմի դիտում և քննարկում | 28.11.-02.12. | Դասղեկ, աշակերտներ |
| 13-րդ շաբաթ | Բնություն և մարդ կապը: Բնական աղետներ. դրանց պատճառները և հետևանքները: (Դեկտեմբերի 7) | 05.12.-09.12. | Դասղեկ, աշակերտներ |
| 14-րդ շաբաթ | Բնապահպանական դաստիարակություն: Զրույց Սևանա լճի խնդիրների մասին: «Սրան. Հայաստանի զավթված գեղեցկուհին» ()Յութուբյան նյութի դիտում | 12.12.-16.12. | Դասղեկ |
| 15-րդ շաբաթ | Առաջադիմության արդյունքների քննարկում | 19.12.-23.12. | Դասղեկ |
| 16-րդ շաբաթ | Երկրորդ կիսամյակում կազմակերպվելիք աշխատանքների քննարկում | 09.01-13.01 | Դասղեկ, աշակերտներ |
| 17-րդ շաբաթ | Հայ Առաքելական եկեղեցու դերը հոգևոր կյանքի և ազգապահպան գործում, | 16.01-20.01 | Դասղեկ, աշակերտներ |
| 18-րդ շաբաթ | Հայոց բանակի օր | 23.01.-27.01. | Դասղեկ |
| 19-րդ շաբաթ | Զրույց «Ես և ուրիշները» | 30.01-03.02 | Դասղեկ |
| 20-րդ շաբաթ | Զրույց «Իմ նախասիրությունները» | 06.02-10.02 | Դասղեկ, աշակերտներ |
| 21-րդ շաբաթ | Բարեկրթություն | 13.02-17.02 | Դասղեկ, աշակերտներ |
| 22-րդ շաբաթ | «Գրքի օր». Գիրքը՝ իմ կյանքում | 20.02-24.02 | Դասղեկ, աշակերտներ |
| 23-րդ շաբաթ | Մեր հազարագանձ լեզուն | 27.02.- 03.03 | Դասղեկ, աշակերտներ |
| 24-րդ շաբաթ | Գիտելիքը ուժ է: | 06.03-10.03 | Դասղեկ, աշակերտներ |
| 25-րդ շաբաթ | Կանանց միջազգային օրը | 13.03-17.03 | Դասղեկ, աշակերտներ |
| 26-րդ շաբաթ | Ընտանեկան ավանդույթներ | 20.03-24.03 | Դասղեկ, աշակերտներ |
| 27-րդ շաբաթ | Հայկական ավանդույթներ | 03.04-07.04 | Դասղեկ, աշակերտներ |
| 28-րդ շաբաթ | Իմ նախընտրած մասնագիտությունը | 10.04-14.04 | Դասղեկ, |

| | | | |
|---|---|---|---|
| | | | աշակերտներ |
| 29-րդ շաբաթ | Հայտնի թանգարաններ. Էրմիտաժ | 17.04-21.04 | Դասղեկ, աշակերտներ |
| 30-րդ շաբաթ | Հայոց Մեծ եղեռնը | 24.04-28.04 | Դասղեկ, աշակերտներ |
| 31-րդ շաբաթ | Հեքիաթին՝ հյուր. Ժողովրդական բանահյուսություն: | 01.05-05.05 | Դասղեկ, աշակերտներ |
| 32-րդ շաբաթ | Ինչն է ինձ խանգարում կազմակերպված և նպատակասլաց լինելու: | 08.05-12.05 | Դասղեկ, աշակերտներ |
| 33-րդ շաբաթ | Ավարայրի ճակատամարտ. Վարդան Մամիկոնյան: Տեսաֆիլմ ,,Ավարայրի ճակատամարտ: Վարդանանք (25 րոպե) | 15.05-19.05 | Դասղեկ, աշակերտներ |
| 34-րդ շաբաթ | Երկրորդ կիսամյակի արդյունքների ամփոփում | 22.05-26.05 | Դասղեկ, աշակերտներ |